

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՀԱՅ ՄԱՄԻԿԻՆ ԱՂՕԹՔԸ****Մայրիկիս**

Ալ կը բաւէ՛, Տէ՛ր Աստուած, մեր տունն ու տեղ դարձուր մեզ,
Թշնամիս իսկ մեզ նման ուրիշի դուռ չձգես:

Անասունին կուտաս որչ եւ թռչունին՝ տաքուկ բոյն,
Իսկ մարդոց ալ մեղաւոր՝ տո՛ւր ապաւէն մէկ անկիւն:

Թող պալատներ վայելեն մեծահարուստն ու արքան,
Մեզ արժանի ըրէ, Տէ՛ր, մեր խրճիթին աննշան:

Ո՛չ հանգիստ կայ, ո՛չ ալ քուն ցուրտ յարկին տակ օտարին,
Ա՛խ, եօթն օրէն աւելի հիւր չպահես ո՛չ ոքին:

Քու օրհնութիւնդ իջնէ, Տէ՛ր, ամբարներուն մեր նորէն,
Եւ օտարներ կշտանան մեր լիառատ սեղանէն:

Մեր սրտերուն հետ կարօտ՝ հին աղօթքներն ալ չորցան,
Առանց տոհմիկ այն խունկին, որ կը ծխար քու անուան:

Ծիծաղն է լաց, երբ մարդուն չի տար իր տունն արձագանգ,
Եւ արցունքն ալ՝ դառն հեգնանք, երբ չկան երգ ու փականք:

Տո՛ւր որ, Աստուա՛ծ, ամէն սիրտ վառի իր սուրբ օճախէն,
Որ չմարի մոմի պէս կեանքի դաժան հոգուն դէմ:

Տո՛ւր որ ամէն ուռճացող մատղաշ հասակ իր կարգին
Զգայ յանկարծ ուսերուն բեռն իր անուշ երգիքին:

Ծնող մանուկն առջի հեղ տեսնէ տնակն հայրական,
Եւ ծերունին իր տան մէջ փակէ՛ աչքերն յաւիտեան:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՏԱՆՍ ԿԱՆՁԸ**

Ահա նորէն քեզ համար կ'այրի հոգիս այս գիշեր,
 Կ'ուզեմ նորէն հեծկլտալ, բայց կը մնամ քարացած
 Եւ այս ճամբէն մեղապարտ՝ ուր կը սահիմ անվերջ ցած՝
 Ահա նորէն կը կանչես ինձ դէպի տուն, դէպի վեր...

Օ՛ կարծես սո՛ւտ է այսպէս, միայն խաբկանք, չար երազ,
 Որ դուն չըկաս, դուն մեռար, ո՛վ սրբութիւնը մեր տան,
 Որ ես դարձեր եմ հիմա փողոցային պիղծ տղան
 Եւ ամբողջ ազգ մը անտուն կ'ոգեվարի մաս առ մաս:

Մարդիկ հպարտ են իմ շուրջ, մարդիկ ուրախ, ժպտերես,
 Արտօրանքով կը բախեն ծանօթ դռներն իրենց տան,
 Մարդիկ հիմա լուսազարդ տուներու մէջ կը ցնծան,
 Մինչ չուզեցին, որ դուն ալ այս արեւուն տակ տեսես:

Ահա նորէն քեզ համար կ'այրի հոգիս այս գիշեր,
 Եւ ես լեցուած սրբազան ու բարբարոս զայրոյթով՝
 Կ'ուզեմ քանդել, կործանե՛լ բոլոր տուններն անվրդով
 Եւ տարածել անոնց տեղ ամէն կողմ սուգ եւ աւեր...

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

1936